Հաստատված է <<ՀՀԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ-06/14>> շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի մասին հանձնաժողովի 21.03.2014թվականի թիվ 1 որոշմամբ

ԱՌԻՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ-06/14>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Առինջի գյուղապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք: Ապրանքի մատակարարման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:
Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնելԿոտայքի մարզ գ.Առինջ Մաշտոց փողոց թիվ 51 հասցեով, մինչև 2014թ. ապրիլի 4-ին, ժամը 11:00-ը:
Հայտերը կբացվեն ապրիլի 4-ին Մաշտոց փողոց թիվ 51 հասցեում ժամը 11:00-ին:
Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Հավելված 1
«ՀՀ ԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ-06/14‰ ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
<<Առինջի գյուղապետարանի>> կողմից N «ՀՀԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ-06/14‰ծածկագրով հայտարարված
ընթացակարգի ---------- չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

նախագիծ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

՝ ՀՀ ԿՄԱԳ-ՇՀ ԱՊՁԲ-06/14

Գ. Առինջ ՝ ՝ 2014թ.

՝ Առինջի գյուղապետարանը՝, ի դեմս համայնքի ղեկավար՝ Գագիկ Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև՝՝ Գնորդ՝՝ « մի կողմից դեմս տնօրեն ,այսուհետև՝՝ Վաճառող՝՝, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված տեսակի մարդատար ավտոմեքանա (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Պայմանագրով նախատեսված Ստացողին (այսուհետև՝ Ստացող)՝ դրանցում նշված ծավալներով և ժամկետներում:

2.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում Վաճառողը Ապրանքը հասցնում է Ստացողին.

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)« եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)« եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին / Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին (Ստացողին) հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ ՀՀ դրամ, որից ԱԱՀ՝ _____ ՀՀ դրամ: Ցուրաքանչյուր միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N1 հավելվածով: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Գնի ցանկացած փոփոխությունն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Պայմանագրով նշված Ստացողին՝ սույն Պայմանագրի **N 1** հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից **2** աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված **N 3**):

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի **0.05%**-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի **7.2** և **7.4** կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրի **1.1** կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի **0,5%**-ի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի **4.2** կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05%**-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է **3** (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի երաշխիքային ժամկետն սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.5 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

9.6 Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

9.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.8 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.10 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի **NN 1,2** հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունք

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

՝ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔ

ԱՌԻՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ.Առինջ Մաշտոց փողոց թիվ 51

Աբովյանի ՏԳԲ

Հ/Հ 900102254035

ՀՎՀՀ 03504156

---------- Գ.Սարգսյան

ՎԱՃԱՌՈՂ

՝ <<_____>>

_____

Հավելված 3

‘ ’ 2014 թ. կնքված

N ՀՀԿՄԱԳ- ՇՀԱՊՁԲ-06/14գնման պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի անվանումը՝ ‘_____’ գնման պայմանագիր□

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ‘__’_____’201 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս_____ և Կապալառուն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ‘___’‘_____’ 201 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ‘__’‘_____’ 201 թ–ից ‘__’‘_____’ 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Աշխատանքներ

Աշխատանքների համառոտ նկարագիրը	Աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների ժամկետը	Վճարմանենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը(ըստ ժամանակացույց
Ընդամենը	----------	-------		-------

Վերոհիշյալ Աշխատանքների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են□

ԱՊՐԱՆՔԸ ՀԱՆՁՆԵՑ

_____

(ëïáñ³·ñáõÃÙáõÝ¤

³½·³ÝáõÝ_____

Î. Î.

ԱՊՐԱՆՔՆ ԸՆԴՈՒՆԵՑ

_____

(ëïáñ³·ñáõÃÙáõÝ¤

³½·³ÝáõÝ_____

Î. Î.

Հավելված 2
2014թ կնքված
ՀՀԿՄԱԳ- ՇՀԱՊՁԲ-06/14

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԿԱՑՈՒՅՑ

հազար դրամ

	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ կազմակերպության միջոցների հաշվին / աճողական			
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Մարդատար ավտոմեքենա		100%	100%	100%

ԳՆՈՐԴ
<<Առինջի գյուղապետարան>>
գ.Առինջ Մաշտոց փողոց թիվ 51
Աբովյանի ՏԳԲ
h/h 900102254035

_____ Գ.Սարգսյան
ստորագրություն
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____
ստորագրություն
Կ.Տ

Հավելված 2
«ՀՀԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ-06/14‰ ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով <<ՀՀԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ-06/14>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, ինչպես նաև Ձեր կողմից տրամադրված ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

Գնման ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Չափա-բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը (Տառերով և թվերով)
1	2	3	4	5-3+4
1	Մարդատար ավտոմեքենա			

*3-րդ սյունյակում նշված «Արժեքը ներառում է ինքնարժեքը և շահույթը:
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____

_____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____

_____ _

_____

_____
Կ. Տ.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1
<<__>> _____ 2014թ ԿՄԱԳ-ՇՀԱՊՁԲ 06/14
ծածկագրով պայմանագրի

Առինջի գյուղապետարանի կարիքների համար 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով հաստատված մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1	հատկանիշները	պետք է լինի չօգտագործված, գազի սարքավորումներ և բալոններ տեղադրված չլինեն
2	Մակնիշը	Hyundai Elantra
3	Անվանում	Մարդատար ավտոմեքենա
4	Արտաքին չափսերը մմ	մինչև երկար.4530,լայն.1775, բարձր 1445
5	Նստատեղեր	4
6	Շարժիչ	բենզին
7	Շարժիչի ծավալ լիտր	1,6-2,0
8	Մաքս. հզորություն (ձ/ու)	մինչև 130-150
9	Թողարկման տարեթիվը	2013-2014
10	Քաշը կգ	1100-1200
11	Վառելիքի բաքի տարողությունը (լ)	40-50
12	Անիվներ	**195) 65 R 15-17**
13	Ղեկը	շարժական և հիդրավլիկ

** Քանակները մոտավոր են

Գ Ն Ո Ր Դ

<<Առինջի գյուղապետարան>>
գ.Առինջ Մաշտոց փողոց թիվ 51
Աբովյանի ՏԳԲ
հ/հ 900102254035

_____ Գ.Սարգսյան
ստորագրություն
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

ստորագրություն
Կ.Տ